Ռուզանի Խաչատրյան. Նապտուրմորտ չրերով (1981)



անվում է անցյալ դարի փորձով: Հին վարպետների վեհաշունչ էներգիաները ոգեշնչել և մինչև այսօր էլ ոգեշնչում են նրան: Բայց եթե ժամանակակից նկարիչների մեծամասնությանը բնորոշ է նորի որոնման հախուռն տենչը, ապա Խաչատրյանի համար ավելի բնութագրական է արվեստի զարգացման պատմության վրա հիմնվող գեղագիտական իդեալների կայունությունը: Դա արտահայտվում է ստեղծագործական ինչպես ներքին կառուցվածքում, այնպես էլ արտաքին տեսանելի գուգահեռներում: Այսպես, ժամանակների կապը ցույց տալու նպատակով նա իր կերպարներին զգեստավորում է հին ժամանակների տարազներով. դրանով նկարիչը, կարծես, ցանկանում է հավատալ, թե մարդու էությունը դարերի ընթացքում, ի վերջո, նույնն է մնում: Բացի այդ, հին տարազներն այդ ստեղծագործություններին որոշակի գեղարտիվ էֆեկտ են հաղորդում:

Խաչատրյանի նուրբ գաստական զգայնությունը հեռու է սենտիմենտալ-սոմանտիկական տարտամ անորոշությունից: Հստակ զծագրված մանրամասները ամենևին էլ չեն խախտում ստեղծագործության ընդհանուր համաչափությունն ու ներդաշնակությունը, քանի որ դրանք ենթարկվում են հիմնական գաղափարին, և ջանասիրությունը գեպքում էլ կերպարները մնում են ամբողջական ու օրգանական: Խաչատրյանի գեղագիտական հայացքների կայունությունը, հստակ մշակված

Ռուզանի Խաչատրյան. Կանացի դիմանկար (1981)

ձեռագիրը և ինքնօրինակ ձիրքը նրան հնարավորություն տվեցին դառնալու հայ անվանի նկարիչներից մեկը։ Նրա վաղ շրջանի ստեղծագործություններից անմոռանալի են Աբու-Լալա Մահարու հիասքանչ դիմանկարը, «Ուսանողուհու» քնքուշ ու մաքուր դիմանկարը, լեզվաբան Մելքումյանի նուրբ թախիծով լի դիմանկարը, և, վերջապես, «Իգիթյանի դիմանկարը»։

Խաչատրյանի առաջին ցուցահանդեսից հետո երեք տարի է անցել, և ահա մի նոր ցուցահանդես, այս անգամ արդեն ժամանակակից արվեստի թանգարանում, որտեղ արվեստագետը ներկայանում է բոլորովին նոր որակ ձեռք բերած։ Ոչ, նա չի դավաճանել իր սկզբունքներին, իր գեղարվեստական հավատամքին ու իդեալին։ Արվեստասերին վերստին ցնցում են նկարչի կատարողական վիրտուոզ տեխնիկան, նրա ստեղծած կերպարները՝ լի հոգեոր կատարելությամբ, ներքին հմայքով։ Դրանք զարձյալ իր ժամանակակիցների՝ մեծ մասամբ արվեստի մարդկանց, իր բարեկամների ու մերձավորների դիմանկարներն են. գերասանուհի Մակսակովա, ուժիսոր Ոյազանով, գերասան Մարյան։ Այստեղ էլ է նա հավատարիմ դասական գծանկարի գեղագիտական սկզբունքներին և նույնիսկ իր նորարարության մեջ դիմում է անցյալին՝ XX դարում վերածնելով լեվկասի հինավուրց տեխնիկան։ Այդ հանիրավի մոռացության մատնված տեխնիկային, որ մեծ չափով օգտագործում էին վերածննդի մեծ նկարիչները։ Խաչատրյանը մոռացության գրկից ոչ միայն դուրս բերեց, այլև նոր որակ հաղորդեց աշխատելու այդ եղանակին։ Արանում է Ռուդոլֆ Խաչատրյանի նորարարությունը, որը և արժանի հաջողություն և ճանաչում բերեց նրան։

Խաչատրյանի նոր աշխատանքները հներից շահեկանորեն տարբերվում են նրանով, որ մեծ խորություն են հաղորդում լեվկաս ֆոնին և ստեղծում պատկերի արտաժամանակայնության պատրանք։ Լեվկասի անհարթ մակերևույթ չեղոք սպիտակ թղթից տարբերվում է նրանով, որ թավշյա, փափուկ մակերևույթով իր վրա է հրավիրում արվեստասերների հայացքը, այն մղելով նկարի խորքը։

Նոր աշխատանքներում էլ նկարիչը օգտագործում է սեպիսի ու սանգվինայի և լուսաստվերային թրթռուն տատանումները, շարիխի վարպետ կիրառումները ստեղծագործությունները դարձնում են նույնքան լիարյուն ու հնչեղ, որքան գրանք կլինեին վառ արտահայտիչ յուղանկարների դեպքում։ Այս առումով հատկապես տպավորիչ է սանգվինայով արված «Բնորդուհու դիմանկարը»։ Կարծես թե ոսկե լույս է հոսում նրա երիտասարդ, ողորկ ու տաք մարմնին ի վար։ Նրա թրթռուն բանաստեղծականությամբ ու ոգեշնչվածությամբ լեցուն գեղեցկությունը մեզ հիշեցնում է անմոռաց աշխարհի հանճարեղ քանդակագործների ստեղծած մարմարե չքնաղ արձանները։

Նկարչի ստեղծագործական յուրօրինակությունը, նրա վառ երևակայությունը արտահայտվում է նրանում, որ մեր ժամանակակիցների դիմանկարները հանդիսանալի մեջ առաջացնում են ասոցիացիաներ անցյալ դարերի մարդկանց հետ։ Վերցնենք թեկուզ Սավելի Յամշչիկովի դիմանկարը։ Ստեղծագործության անվանումից մենք տեղեկանում ենք, որ պատկերված անձնավորությունը մեր ժամանակակիցն է, սովետական արվեստագետ։ Սակայն, չգիտես ինչու, նա ավելի շուտ հիշեցնում է հին Ռուսաստանի մոգ ու անբարեհամբույր մուժիկներին, որոնք սակայն ահիթ բաց չէին թողնում պարծենալու իրենց ուժով ու խիզախությամբ։

Նույնը կարելի է ասել նաև Վ. Մ.-ի դիմանկարի մասին, որի ինքնագոհ, կենսուրախ դեմքը, խորամանկ ժպիտը մատնում են, որ նրան ամենևին էլ խորթ չեն այս կյանքի հաճույքներն ու բարիքները։

Ռ. Խաչատրյանի ստեղծագործության այս առանձնահատկությունը ևս ստեղծում է արտաժամանակայնության պատրանք։ Նախօրոք չիմանալու դեպքում, թե ում դիմանկարն է պատկերված նկարիչը, անհնար է ճշգրտորեն որոշել, թե որ դարաշրջանին և որ ժողովրդին է պատկանում կերպարը։ Նրա ստեղծագործության մեջ իրենց արտացոլումն են գտնում տարբեր դարաշրջանների ու տարբեր ժողովուրդների առանձնահատկությունները։

Արանում է արտահայտվում նկարչի ստեղծագործական պրպտումների արդիականությունը, որ պատկերածի կոնկրետության, գաղափարների հստակ գծանկարի, ստեղծած կերպարների անալիտիկականության ու հավատարմության հետ միասին ոչ թե արձանագրում, այլ ժամանակակից ուրիշ նկարիչներից ոչ պակաս վերացարկում է իրականությունը։

Ժամանակակից արվեստում ակա են երկու միտումներ։ Նկարիչների մի մասը գեղարվեստական պատկեր ստեղծելիս ընդհանրապես հրաժարվում է իրականության առարկայական պատկե-

Ռուդոլֆ Խաչատրյան. Տղամարդու դիմանկար (1981)

բումից, մի մասն էլ, ընդհակառակը, չի հրաժարվում դրանից, սակայն արտաքին կապապարը վերածում է խորհրդանիշի: Վերջինների թվին է պատկանում նաև Ռուդոլֆ Խաչատրյանը:

Դիմանկարներից բացի, Խաչատրյանն ունի նաև մի շարք կոմպոզիցիաներ ու նատյուրմորտներ: Յուցահանդեսում ներկայացված աշխատանքներից առանձնահատուկ ուշադրություն է գրավում «Ծաղիկներ» նատյուրմորտը: Այս աշխատանքը առանձնանում է իր անսովոր մաքրությամբ, կատարելությամբ ու նրբագեղությամբ: Նրա մեջ վշտոտ գարնան թարմ շունչ կա: Դասական կոմպոզիցիայի կանոններով շարված շշերի միջից սլացիկ ու ծիգ ընձյուղներն են հառնում՝ հանդիսականի հոգում արթնացնելով կեցության հրճվանքի զրնգուն հնչյուններ:

Խաչատրյանի ստեղծագործությունը հասկանալի ու մոտ է բոլոր նրանց, ովքեր արվեստում փնտրում են կատարյալն ու գեղեցիկը: Այդ արվեստը մարդասիրական է ու ամբողջական իր հենքով, այդ պատճառով էլ՝ դյուրամատչելի նույնիսկ նրանց համար, ովքեր անծանոթ են ժամանակակից կերպարվեստի բազմազան միտումներին: Ահա ինչու ցուցահանդեսը այդքան բազմաթիվ այցելուներ է գրավում:

Խաչատրյանի վերջին ցուցահանդեսը ցույց տվեց, որ ձեռք բերածով երբեք չգոհացող, արվեստում շարունակ նոր ուղիներ որոնող նկարիչը կորու է հրամցնել այնպիսի անակնկալներ, որ ոչ ոք, անգամ իսկ ինքը, չի կարող նախօրոք գուշակել: Սակայն ակնհայտ է մի բան. նկարչի արվեստի զարգացման հաջորդ աստիճանը նրա ստեղծագործության որակի բարձրացման մի նոր փուլ, գրաֆիկական արվեստի զարգացման մի նոր՝ ավելի բարձր մակարդակ է պարզում մեզ: Այդ է հուշում նաև ցուցահանդեսում ներկայացված «Ինքնադիմանկարը»: Մենք ակնկալում ենք Խաչատրյանին նկարագրելի առաջ, մասիսաբ Ձեռքին աշխատելիս:

Նրա գեմքը վստահությամբ, իր էության հանդեպ համատով է լեցուն, սենյան հայացքն, ասես ցանկանում է թափանցել նյութի անիմանալի խորքերը, իսկ ձեռքը պատրաստ է իր անկրկնելի մատնահետքերը թողնել անագարտ լեվկասի վրա:

ՄԱՐԳԵՍ ԱՍԱՄՈՆՅԱՆ

Советакан Арвест
Ереван
N3. 1984

ՌՈՒԴՈԼՖ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ՝ ԾԱՆՈԹ ՈՒ ՆՈՐ

Ռուդոլֆ Խաչատրյան. Թեմեանկար (1981)

Ռուդոլֆ Խաչատրյանն իրեն ամբողջությամբ նվիրել է գրաֆիկային: Եթե գծանկարը այլ նկարիչների համար գեղարվեստական արտահայտության հասնելու օգնական միջոց է, ապա Խաչատրյանի արվեստում այն ֆունկցիոնալ անկախություն և ինքնուրույնություն է ստացել: Գրաֆիկայի ժյաս լեզվով առավել ամբողջականորեն է բացահայտվել նրա տաղանդը: Գասական կատարյալ գծանկարը արվեստագետի ստեղծագործության մեջ համատեղվում է ժամանակակից մտածողության և պատկերավորության հետ: Եթե հայ նկարիչները մեծ մասամբ հուզական հագեցվածության են հասնում գունային բարդ համադրություններով, ապա Խաչատրյանը կարողանում է արտահայտել ամենանուրբ զգացումներ ու հույզեր՝ աշխատելով միայն մեկ գույնի մատիտով: Նախընտրելով հիմնականում գիմանկարի ժանրը, Խաչատրյանը ստեղծել է շատ արտահայտիչ կերպարներ: Նրա ստեղծագործություններում մարդկային գեմքերն աչքի են ընկնում սովոր գեղեցկությամբ: Նրանք մեզ հիշեցնում են Վերածննդի վարպետների ստեղծած հոյակապ կերպարները: Եվ այդ գեմքերը պատկանում են մեծ մասամբ մեր ժամանակակիցներին: Սրանով հանդերձ, նա ամենևին էլ չի «զարդարում» իր մոդելներին: Գեղագետի նուրբ ճաշակը նրան թույլ է տալիս իր շրջապատի մարդկանց մեջ տեսնել գեղեցիկը և այդ շրջապատի տեսանկյունով ներկայացնել նրանց իր գործերում: Հոգևոր հարուստ կյանք և ներքին նշանակալիություն կա այդ գեմքերի վրա: Անցողիկն ու անկայունը, մակերեսայինն ու անկարևորը տեղ չունեն այստեղ: Ամենևին էլ պարտադիր չէ, որ այդ մարդիկ ունենան իդեալական գիմագծեր: Կերպարների ոգեշնչվածության շնորհիվ նույնիսկ ոչ գեղեցիկ գեմքերը Խաչատրյանի գիմանկարներում թվում են գեղեցիկ ու վեհ: Այս յուրահատկությունը բնորոշ է Խաչատրյանի բոլոր գիմանկարներին: Սակայն այս հանգամանքը բնավ չի խանգարում, որ նկարիչը պարզի մեզ իր պատկերած անձնավորությունների ամենանուրբ հոգեբանական բնութագիրը: Նրա գիմանկարների հերոսներից յուրաքանչյուրն ունի իր անկրկնելի անհատականությունը: Նկարչի ստեղծագործությունը մշտապես